ԱՎԱՐՏԱՃԱՌԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Ապրիլի 12-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում տեղի ունեցավ ճեմարանավարտ չորս սարկավագների ավարտաճառերի պաշտպանություն:

Ներկայացված ավարտաճառերի թեմաներն էին՝ «Գրաբարի անցյալ դերբայի իմաստային առումները Ղևոնդի «Պատմության» մեջ» (Գևորգ սրկ. Մակարյան, ղեկավար՝ Պ. Բեղիրյան), «Էջմիածնի հոգևոր միաբանության մտավոր զարթոնքն ըստ Առաքել Դավրիժեցու» (Նելսոն սրկ. Բաբայան, ղեկավար՝ Հրաչյա Միրզոյան), «Հոգևոր հովվի գործունեության հոգեբանական կողմերի քննության փորձ» (Արմեն սրկ. Պետրոսյան, ղեկավար՝ Էլեոնորա Սարգսյան), «Հայոց Հայրապետական Աթոռի դեգերումները միջնադարում և վերադարձը 1441-ին» (Գևորգ սրկ. Միրզոյան, ղեկավար՝ Սանդրո Բեհբուդյան):

Ավարտաճառերի պաշտպանությունից հետո սարկավագներն արդեն իրավունք են ստանում ձեռնադրվելու իբրև Հայ Եկեղեցու ամուսնացյալ կամ կուսակրոն քահանաներ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ